ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվական, N 67-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ «ԼՈՌԻ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով «Լոռի» Ջրօգտագործողների ընկերության գործադիր տնօրեն Ա. Ղարիբյանի՝ 22.04.2024 թվականի թիվ 79, ՀՀ Լոռու մարզպետ Ա. Ղազարյանի՝ 07.05.2024թ. թիվ 01/108.4.2/03961-2024 գրությունները և Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերը անհատույց օգտագործման իրավունքով և անժամկետ հանձնել «Լոռի» ջրօգտագործողների ընկերությանը՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			

5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՋԱԽԱՐՈՎ			
15.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մայիսի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Աղյուսակ 1

Ալավերդի համայնքի տարածքում առկա ոռոգման համակարգերի ցանկ

N	Բնակավայրը	գործող	չգործող
1.	Կարմիր Աղեկ	✓	
2.	Օձուն	✓	
3.	Հագվի		✓
4.	Ակներ	**մասնակի**	
5.	Մեծ Այրում	✓	
6.	Ճոճկան	✓	
7.	Արդվի	✓	
8.	Մղարթ	✓	
9.	Ծաթեր	✓	
10.	Հաղպատ	**մասնակի**	
11.	Շնող	✓	
12.	Սանահին		✓
13.	Աքորի		✓
14.	Արևածագ	✓	
15.	Այգեհատ	✓	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ 01/108,42/03961-2024
« 07 » 05 2024 թ.

ՀՀ Լոռու մարզի
համայնքների ղեկավարներին

Հարգելի պարոնայք

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 03.05.2024թ. թիվ ԳՍ/15.3/14217-2024 հանձնարարականի

Առաջարկում եմ կից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն և համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի համար համապատասխան համայնքների ավագանիների որոշումների ընդունման, անհատույց օգտագործման պայմանագրերի կնքման և այլ փաստաթղթերի տրամադրման հարցում աջակցել ջրօգտագործող ընկերություններին:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

Հարգանքով՝ Подписано: GHAZARYAN ARAM 2003720081 Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

կատ. Վ.Դանիելյան
հեռ. /0322/ 2-03-91

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 54-09-09, ֆաքս՝ (374 10) 54-06-13
Էլ.փոստ՝ scws@scws.am
Վեբ կայք՝ scws.am

«____» _____ 2024թ.

N 01/15/2094-2024

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԳՆԵԼ ՍԱՆՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սանոյան,

Ի կատարումն 2024 թվականի ապրիլի 4-ի Ձեր N ԳՍ/15.3/10842-2024 հանձնարարականի՝ կապված համայնքային և պետական սեփականություն համարվող ոռոգման համակարգերի կամ այլ գույքերի ամբողջական ցանկի վերաբերյալ ամփոփ տեղեկանքում նշված աշխատանքների իրականացման և գույքի անհատույց օգտագործման պայմանագրերի կնքման հետ, հայտնում ենք, որ Ջրային կոմիտեն գրությամբ դիմել է ջրօգտագործող ընկերություններին՝ համապատասխան գործողություններ իրականացնելու (համայնքներին հարցումներ, արխիվային փաստաթղթերի ուսումնասիրություն, համայնքների ավագանիների նոր որոշումների ընդունում և այլ աշխատանքների իրականացում, հետագայում նաև անհատույց օգտագործման նոր պայմանագրերի կնքում) և պահանջվող փաստաթղթերը Ջրային կոմիտե ներկայացնելու նպատակով:

Ընկերություններից ստացված տեղեկատվություններն ամփոփելուց և գույքերի անհատույց օգտագործման պայմանագրերը կնքելուց հետո Ձեզ լրացուցիչ կտեղեկացվի:

Կատարող՝
Գույքի կառավարման և ներդրումների
իրականացման վարչություն
Հեռ.՝ (+374 10) 54-12-88

Միաժամանակ խնդրում ենք Ձեր միջնորդությունը համայնքներին՝ համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի համար համապատասխան համայնքների ավագանիների որոշումների ընդունման, ահնատույց օգտագործման պայմանագրերի կնքման և այլ փաստաթղթերի տրամադրման հարցում աջակցել ջրօգտագործող ընկերություններին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Восстановимая подпись

X

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN VAHAGN 1812750064

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ, 30-րդ հոդվածների և 40-րդ հոդվածի 4-րդ մասը և ՀՀ ջրային օրենսգրքի 61-րդ հոդվածն իրավական հիմք են հանդիսանում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերն անհատույց օգտագործման իրավունքով ջրօգտագործողների ընկերություններին (այսուհետ՝ ՋՕԸ) փոխանցելու համար:

ՀՀ կառավարության 13.03.2003թ. N 314-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով պետական և համայնքային սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերն անհատույց օգտագործման իրավունքով փոխանցվել են ՋՕԸ-երին, տարբեր ժամանակահատվածներում կնքվել են անհատույց օգտագործման իրավունքով փոխանցվող գույքերի պայմանագրեր:

ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված կետերի Ջրային կոմիտեն համապատասխան ՋՕԸ-երի հետ, տարբեր ժամանակահատվածներում կնքել է անհատույց օգտագործման իրավունքով փոխանցվող գույքերի պայմանագրեր:

Գույքի օգտագործման իրավունքի հետ են փոխանցվել նաև դրանց վերաբերող այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են տեխնիկական անձնագրերը, գույքի շահագործման և պահպանման տեխնիկական նորմերը և գույքի առանձնահատկություններից բխող այլ փաստաթղթեր, փոխարենը ՋՕԸ-երից պահանջելով գույքը շահագործել և պահպանել տեխնիկական նորմերին համապատասխան՝ միաժամանակ ապահովելով գույքի աշխատանքային վիճակը: Այս դրույթն ապահովելու նպատակով ՋՕԸ-երի գործադիր տնօրենների հրամաններով, յուրաքանչյուր տարի ստեղծվում են հանձնաժողովներ, որոնց միջոցով իրականացվում են հիմնական միջոցների, ինչպես նաև ապրանքանյութական արժեքների գույքագրման աշխատանքներ, որին մասնակից են դառնում նյութական պատասխանատու աշխատակիցները (տեղամասի պետերը): Գարնանային վարար ջրերի բացթողման նախապատրաստական աշխատանքների կատարման ընթացքի դիտարկումները ևս իրականացվում են ՋՕԸ-երի կողմից ստեղծված հանձնաժողովների միջոցով: Գույքի վիճակի, ինչպես նաև արձանագրված տեխնիկական խնդիրների վերացման համար, յուրաքանչյուր աշուն, ոռոգման սեզոնից հետո, ստեղծված տեխնիկական հանձնաժողովի կողմից կատարվում է համակարգի ուսումնասիրություն, որի արդյունքներով կազմվում է թերությունների տեղեկագիր: Ստացված արդյունքների և դրանց վերացման ծավալների մասին, ներկայացվում է Ջրային կոմիտե: Վերջնական թերությունների ծավալը ճշգրտելուց հետո այն ընդգրկվում է հաջորդ տարվա ֆինանսական հոսքերում, որպես գարնան նախապատրաստական աշխատանք կամ ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Համայնքային սեփականություն հանդիսացող թվով 431 ոռոգման համակարգեր անհատույց օգտագործման են հանձնվել համապատասխանաբար 15 ՋՕԸ-ին, որից 65 գույք ունեն համապատասխան համայնքների ավագանու որոշումներ, 160 գույքի համար կնքվել են անհատույց օգտագործման պայմանագրեր, իսկ թվով 206 գույքերի համար որևէ փաստաթուղթ առկա չէ:

Համաձայն ՋՕԸ-ից ստացված պաշտոնական գրությունների՝ 2002-2018թթ. ընթացքում ՋՕԸ-երի մի քանի անգամ վերակազմակերպման և առանձնացման արդյունքում կորել են կամ բացակայում են համապատասխան համայնքների ավագանիների որոշումները և վերջիններիս հետ կնքված անհատույց օգտագործման պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունները առկա չեն: Բացակայող փաստաթղթերի վերականգնման/կրկնօրինակման/վերաձևակերպման համար անհրաժեշտ են համապատասխան գործողություններ (համայնքներին հարցումներ, արխիվային

փաստաթղթերի ուսումնասիրություն, համայնքների ավագանիների նոր որոշումների ընդունում և այլ գործողությունների իրականացում, հետագայում նաև անհատույց օգտագործման նոր պայմանագրերի կնքում):

Պետական սեփականություն հանդիսացող Ջրային կոմիտեի հաշվեկշռում հաշվառված թվով 747 ոռոգման համակարգեր և 1010 այլ գույքեր անհատույց օգտագործման են հանձնվել թվով 15 ՋՕԸ-ին: Պետական սեփականություն համարվող ոռոգման համակարգերից անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ ունեն միայն թվով 271-ը:

Գույքի օգտագործման իրավունքի հետ փոխանցվել են նաև դրանց վերաբերող այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են տեխնիկական անձնագրերը, գույքի շահագործման և պահպանման տեխնիկական նորմերը և գույքի առանձնահատկություններից բխող այլ փաստաթղթեր, փոխարենը ՋՕԸ-երից պահանջելով գույքը շահագործել և պահպանել տեխնիկական նորմերին համապատասխան՝ միաժամանակ ապահովելով գույքի աշխատանքային վիճակը, սակայն ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով 55 ՋՕԸ-ների վերամիավորման արդյունքում այդ փաստաթղթերի մի մասը կորել են: Ջրային կոմիտեն 2003թ. Կոտայք, Սև Ջուր-Ախթամար, Նոյեմբերյան, Մխչյան, Քասախ, Ազատ, Գետիկ, Արարատ, Վեդի, Աշտարակ, Ջրեժ-Ձորաղբյուր և Արտաշատ ՋՕԸ-երի հետ կնքել է անհատույց օգտագործման իրավունքով փոխանցվող գույքերի թվով 12 պայմանագրեր, «Եղեգնաձոր» ՋՕԸ-ի 2008թ. «Վաղարշապատ» ՋՕԸ-ի հետ 2009թ., իսկ «Հրազդան-Ջուր» ՋՕԸ-ի հետ՝ 2007թ.:

Ոռոգման համակարգերից թվով 271 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները հին նմուշի են և անհրաժեշտ է փոխարինել նոր նմուշի վկայականներով, իսկ թով 476 ոռոգման համակարգերի համար անհրաժեշտ է գույքագրում, չափագրում անկախ լիցենզավորված կազմակերպությունների կողմից: Չափագրման արդյունքում հնարավոր կլինի ձեռք բերել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ: ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված կետերի Ջրային կոմիտեն համապատասխան ՋՕԸ-երի հետ, տարբեր ժամանակահատվածներում կնքել է անհատույց օգտագործման իրավունքով փոխանցվող գույքերի պայմանագրեր, սակայն բացակայում են անհատույց օգտագործման պայմանագրերի որոշակի մասը: Անհրաժեշտ է համապատասխան ՋՕԸ-երի հետ բացակա ոռոգման համակարգերի համար կնքել անհատույց օգտագործման պայմանագրեր:

Նախորդ տարիներին, Ջրային կոմիտեն, բյուջետային ֆինանսավորման հայտը ներկայացնելիս «Նոր նախաձեռնություններ» բաժնում ներկայացրել է «Հիդրոտեխնիկական կառուցվածքների գույքագրում և գնահատում» միջոցառումը, որը չի ներառվել ՀՀ պետական բյուջեներում:

Միաժամանակ նշված միջոցառումը ներառված է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հավելվածի «3.3 Ջրային տնտեսության» բաժնում», ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 87-րդ կետում: Ջրային կոմիտեն, 2024 թվականին նախատեսում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին (Ջրային կոմիտեին հատկացված միջոցների տնտեսումների հաշվին) ընտրել խորհրդատու, որը կիրականացնի ոռոգման համակարգերի գույքագրում և գնահատում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/12.2/12387-2024

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սանոսյան,

Ձեր կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունված է ի գիտություն:

Խնդրում եմ արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը 1-ամսյա ժամկետում ներկայացնել Վարչապետի աշխատակազմ:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Մարինա Վարդանյան
Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի հարցերի վարչության գլխավոր մասնագետ
Հեռ. 010515837
Էլ փոստ՝ marina.vardanyan@gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

№ ԳՍ/15.3/9619-2024

Վարչապետի աշխատակազմի ղեկավար
Ա. Հարությունյանին

Ի պատասխան Ձեր 04.03.2024թ.
N 02/12.2/7244-2024 գրության

Հարգելի՛ պարոն Հարությունյան

Ձեզ ենք ներկայացնում համայնքային և պետական սեփականություն համարվող ոռոգման համակարգերի կամ այլ գույքերի ամբողջական ցանկի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Восстановимая подпись

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Հարգանքով՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069 Գ" Սանոսյան

Կատարող՝ Տարածքային ծրագրերի և մշտադիտարկման բաժնի պետ, Ա. Խուդոյան
Հեռ. 010515130

<<ԼՈՌԻ>> ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ОБЩЕСТВО ВОДОПОЛЬЗОВАТЕЛЕЙ <<ЛОРИ>>

<< LORI>> WATER USERS ASSOCIATION

ՀՀ Լոռու մարզ, գ.Շիրակամուտ

☎+(374) 99 311555

✉ Էլ. փոստ/E-mail:lori.wua@mail.ru

22.04.2024թ.
N 79

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավար՝
պարոն՝ Դ. Ղումաշյանին

Հարգելի՝ պարոն Ղումաշյան

«Լոռի» ՋՕԸ-ի կողմից համայքների ներտնտեսային ցանցերի սպասարկումն (ջրամատակարարումն) իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ նշված ցանցերի և վերջիններիս հետ կապված այլ գույքի (առկայության դեպքում) «Լոռի» ՋՕԸ-ին անհատույց հանձնման պայմանագրեր:

Ինչպես գիտեք ՋՕԸ-երի վերակազմակերպման և համայնքների խոշորացման արդյունքում կորել կամ բացակայում են ներտնտեսային ցանցերը ՋՕԸ-երին անհատույց տրամադրելու մասին ավագանիների որոշումները:

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք հնարավորինս սեղմ ժամկետներում նախաձեռնել պայմանագրերի կնքման գործընթացը:

Կից ուղարկում ենք Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականը:

Առդիր՝ 1 արխիվացված ֆայլ:

Գործադիր տնօրեն՝ Ա. Ղարիբյան

"ԼՈՌԻ"
"LORI"
06931564

Կատարող՝ Ա. Միքայելյան
Հեռ.՝ +(374) 94 35 51 05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

Ջրային կոմիտեի նախագահ Վ. Գևորգյանին

Խնդրում եմ ձեռնարկել միջոցներ տեղեկանքում նշված աշխատանքների իրականացման, գույքի անհատույց օգտագործման պայմանագրերի կնքման ուղղությամբ և արդյունքների վերաբերյալ տեղեկացնել:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Ժամկետ՝ 02.05.2024թ.:

Восстановимая подпись

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ" Սանոսյան

№ ԳՍ/15.3/10842-2024 "___" _____2024 թ"

Կատարող՝ Անուշ Խուդոյան
Հեռ.՝ 010515130